

Տավուշի մարզ

«Դիլիջան» ազգային պարկի կենսաբանական բազմազանության առանձնահատկությունները

Ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Փամբակի, Արեգունու, Միափորի լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում՝ ծովի մակարդակից 1000-2200 մ բարձրությունների սահմաններում:

Հարուստ կենսաբազմազանություն և բարձր գիտական, ռեկրեացիոն, բնապահպանական արժեքներով հարուստ այս տարածքը Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներից է, որի կառավարման լիազոր պետական մարմինը ՀՀ բնապահպանության նախարարությունն է:

Այստեղ պահպանության են վերցված կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու, կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ կենդանական աշխարհը և պատմաճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները:

Պարկի կենսաբանական բազմազանությունը, առանձնահատկությունները և օգտագործման հնարավորությունները

Բուսական աշխարհ - Հարուստ և յուրօրինակ բուսական կենսաբազմազանությունը ընդգրկում է շուրջ 1000 տեսակ անոթավոր բույսեր: Պարկի բուսաշխարհի 91 տեսակներ դեմոնստրացիոն ներկայացուցիչներ են, որոնցից 47 -ը ծառեր են, 43-ը՝ թփեր, 1-ը՝ լիան:

Պարկի բուսականության առավել տարածված տիպը անտառն է: Հիմնական անտառ կազմող ծառատեսակներ են՝ կաղնի խոշորառեջը (*Quercus macranthera*), կաղնի վրացականը (*Q. iberica*), հաճարենի արևելյանը (*Fagus orientalis*), բոխի սվոնիականը (*Carpinus betulus*), բոխի արևելյանը (*C. orientalis*), որոնք առաջացնում են միատարր համակեցություններ՝ կաղնուտներ և հաճարկուտներ, ինչպես նաև խառը անտառային ենթատիպեր, կազմված այդ ծառատեսակների տարբեր խմբավորումների բազմաթիվ տարբերակներից: Սաղարթավոր տերևաթափ ծառատեսակներից տարածված են նաև՝ թխկու, կեչու, հացենու, ուռենու, լրեենու, թեղու և այլ տեսակներ:

Ասեղնատերև ծառատեսակներից կազմված անտառները պարկում գրավում են սահմանափակ տարածք և հանդիպում առանձին կղզյակների տեսքով: Դրանցից են սոճի Կոխին (*Pinus kochiana*), սոճի անտառայինը (*P. sylvestris*), կենի հատապտղայինը (*Taxus baccata*), գիհի բազմապտուղը (*Juniperus polycarpus*), գիհի գարշահոտը (*J. foetidissima*), գիհի կիսագնդաձևը (*J. semiglobosa*), գիհի երկարատերևը (*J. oblonga*):

Որպես բնափայտ հատկապես բարձր են գնահատվում կաղնու, հաճարենու, բոխու բնափայտը, որոնք մեծ կիրառություն ունեն կենցաղում, շինանարարության, գործիքաշինության և այլ բնագավառներում:

Պարկի տարածքում աճում են նաև վայրի մրգատուներ՝ տանձենին (*Pyrus caucasica* Fed.), խնձորենին (*Malus orientalis* Uglitzk), սալորենին (*Prunus divaricata* Ledeb., *P. spinosa* L.), ընկուզենին (*Juglans regia* L.), հոնի սվոնիականը (*Cornus mas*) և այլն, որոնք լայն կիրառություն ունեն պահածոների արտադրության մեջ և որպես դիմացկուն պատվաստակալ օգտագործվում են տնտեսապես արժեքավոր ու բարձր բերքատու պտղահատապտղային բույսերի տեսակներ ստանալու համար:

«Դիլիջան» ազգային պարկի ֆլորայում հանդիպում են 27 Կովկասյան, 25 Հայկական լեռնաշխարհի, 18 անդրկովկասյան, 3 Հարավանդրկովկասյան էնդեմիկներ: Այստեղ պահպանվել են նաև երրորդական ժամանակահատվածի այնպիսի ռելիկտներ, ինչպիսիք են հատապտղային կենին, Կոչիի սոճին և կովկասյան մրտավարդը: Կենու լավ պահպանված անտառակը գտնվում է Փոլադ գետի ավազանում: Մյուս, ավելի փոքր անտառակը գտնվում է Աղստև գետի վերին հոսանքում՝ Փամբակի լեռնաշղթայի այսպես կոչված Ֆրոլովի բալկա ձորում: Հատուկ ուղադրության է արժանի կովկասյան մրտավարդը, որը պարկի սահմաններում աճում է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային կողմնադրության լեռնալանջերին:

Դենդրոֆլորայի բազմազանության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում ռելիկտային տեսակները, որոնք անցյալ երկրաբանական դարաշրջաններից գրեթե անփոփոխ ձևով պահպանվել են մինչև մեր օրերը: Այդ տեսակներից է համարվում հատապտղային կենին: Ամենախոշոր Ախնաբատի կենու պուրակը գտնվում է Միափորի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերին, Գետիկ գետի ավազանում, ծովի մակարդակից 1400-1800 մ բարձրության վրա: Այս տարածքը որպես արգելավայր կազմավորվել է դեռևս 1958 թ., 25 հա տարածության վրա: Այստեղ աճում են երկարակյաց կենու 300-400 տարեկան ծառեր, որոնք ունեն մինչև 25 մ բարձրություն և բնի 80-100 սմ տրամագիծ: Անտառում կենին զբաղեցնում է երկրորդ շարահարկը:

Թփատեսակներից հանդիպում են նաև ծորենի արևելյանը (*Berberis orientalis*), տխլենի սովորականը (*Corylus avellana*), իլենի եվրոպականը (*Euonymus europaea*), փշարմավ (չիչխան) դժնիկանմանը (*Hippophae rhamnoides*), մրտավարդ կովկասյանը (*Rhododendron caucasicum*), հապալասենի մրտենականը (*Vaccinium myrtillus*), գազ մանրազլխիկը (*Astragalus microcephalus*), կոկոռչենի թեքվածը (*Grossularia reclinata*), հաղարջենի ալպիականը (*Ribes alpinum*), հաղարջենի արևելյանը (*R. orientale*), հասմիկ թփուտայինը (*Jasminum fruticans*), ցաքի փշոտը (*Paliurus spina-christi*), սզնի թեքաբաժակատերևը (*Crataegus curvisepala*), սզնի արևելյանը (*C. orientalis*), գլեռենի սովորականը (*Mespilus germanica*), մամխի փշավորը (*Prunus spinosa*), մասրենի Բուասայեին (*Rosa boissieri*), մոշենի սովորականը (*Rubus idaeus*), քարամոշը (*R. saxatilis*) և այլն:

Ըստ օգտագործման նշանակության պարկի բուսատեսակներից հանդիպում են 123 սննդում օգտագործվող տեսակներ (կռատուկ մեծը (*Arctium lappa*), լապսան խոշորածաղիկը (*Lapsana grandiflora*), կաթնբեկ խորդուբորդը (*Sonchus asper*), տատրակ սովորականը (*Tussilago farfara*), խնկատերև կլորը (*Acinos rotundifolius*), խուլեղինջ սպիտակը (*Lamium album*) և այլն), 180 դեղաբույսեր (անթառանը (*Helichrysum*), դաղձը (*Mentha*), ուրցը (*Thymus*), մեղրածուծը (*Marrubium*), լոշտակը (*Bryonia*), մատուտակը (*Glycyrrhiza*) և այլն), 120 ներկատու (թխկին, կեչին, դրախտածառը, կտտկենին, շիկատակը և այլն), 350 մեղրատու (կորնգանը, առվույտը, լորենին, երեքնուկը, կեչին, տանձենին, սզնին և այլն), 400 տեսակ կերային (կորնգանը (*Onobrychis*), երեքնուկը (*Trifolium*), առվույտը (*Medicago*), վարսակը (*Avena*), ցորնուկը (*Bromus*) և այլն): Նշենք նաև, որ պարկի կերհանդակներն առանձնանում են իրենց բուսական համակցությունների մեծ բազմազանությամբ:

Հատուկ նշանակություն ունեն նաև վիտամինատու, խեժատու, դաբաղող հատկություն ունեցող բույսերը:

Պարկի կենսաբանական բազմազանությունում շատ են նաև սնկերի տեսակները, որոնցից շատերն օգտագործվում են մարդու սննդում:

Կենդանական աշխարհ- Պարկի յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված կենդանական աշխարհով: Առկա կենդանական աշխարհի ողնաշարավորների տեսակային կազմը ներկայացվում է ձկների 5, երկկենցաղների 4, սողունների 13, թռչունների 147 և կաթնասունների 43 տեսակներով: Առկա տեսակները շարժունակության շնորհիվ ունեն միջգոտային տարածման ընդարձակ արեալ, որը պայմանավորված է շատ տեսակների սեզոնային և այլ միգրացիաների, ինչպես նաև նրանց հարմարվողականության հետ:

Ներկայումս պարկի տարածքում խստիվ արգելվում է ձկնորսական, որսորդական և դեղագործական նպատակներով կենդանիների որսը:

Ձկներից առավել շատ տարածված է կարմրախայտը (*Salmo trutta m. fario*), կողակը, կարասը (*Varicorhinus capoeta*) և բեղլուն (*Barbus tauricus*):

Երկկենցաղներից հանդիպում են կանաչ դողոշը (*Bufo viridis*), լճագորտը (*Rana ridibunda*), Շելկովնիկովի ծառագորտը (*Hyla arborea shelkovnikovi*), անդրկովկասյան գորտը (*Rana macrocnemis*):

Պարկի կենդանական աշխարհի բազմազանությունում հատուկ տեղ են զբաղեցնում սողունները: Դրանք բավականին տարածված են պարկի բոլոր գոտիներում: Սողունների դասից հանդիպում են մողեսների, օձերի և կրիաների կարգի ներկայացուցիչներ: Էնդեմիկ տեսակներն են հայկական մողեսը, Դալի մողեսը (*Lacerta dahli*), Ռոստոմբեկի մողեսը

(*Lacerta rostombekovi*): Սրանցից ՀՀ Կարմիր գրքում գրանցված է անդրկովկասյան սահնոճը (*Elaphe hohenackeri*):

Պարկի բնորոշ թռչնատեսակներն են՝ մարեհավը, լորը, գորշ կաքավը, կասպիական հնդկահավը, վայրի աղավնին, սպիտակագլուխ անգղը, գառնանգղը, թզուկ արծիվը, բերկուտը, բազենների բազմաթիվ տեսակներ, ինչպես նաև ջրլող թռչունների, ճնճղուկազգիների, փայտփորազգիների, այծկիթանանների, բվանմանների, կկվանմանների, ճուռականմանների ներկայացուցիչները: Նշվածներից մարեհավն ու հնդկահավը էնդեմիկ տեսակներ են: Առկա թռչնատեսակների մեծ մասը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Թռչնատեսակների այսպիսի հետաքրքիր և յուրօրինակ բազմազանությունը գրավում է բազմաթիվ թռչնասերների:

Կաթնասուններից այստեղ հանդիպում են գորշ արջ (*Ursus arctos syriacus*), գայլ (*Canis lupus*), աղվես (*Vulpes vulpes*), Հայաստանում հանդիպող կզաքիսների բոլոր տեսակները, ջրասանույր (*Meles meles*), լուսան (*Felis lynx*), անտառային կատու (*Felis silvestris*), պարսկական սկյուռ (*Sciuris persicus*), անտառային քնանուկ, գորշ նապաստակ (*Lepus europaeus*), ողնի, այծյամ (*Capreolus capreolus*), ազնվացեղ եղջերու (*Servus elaphus*), վայրի խոզ (*Sus skropha*) և այլն:

* * *

Պարկի կենսաբանական բազմազանության պահպանությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև վերարտադրությունը ուժեղացնելու նպատակով ներկայումս բնապահպանական տարբեր ծրագրերի շրջանակներում կատարվում են պարկի նյութատեխնիկական բազայի համալրում և ռազմավարական կառավարման պլանների մշակում: Ծրագրերի նպատակներից է նաև գործողությունների ընթացքում պարկի կենսաբազմազանությունից օգտվող հարակից համայնքների աղքատության կրճատումը՝ բարելավելով նրանց կյանքի որակը:

Պատրաստեց Մերի Թամանյանը
«Դիլիջան» ազգային պարկ

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ
www.reforms.am

տպաքանակը՝ 2 500